ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/141

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Արմավ Գրուպ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92» գնանշման հարցում, ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.03.2022թ.-ի թիվ 26/26-1/5416-2022 գրությամբ «Արմավ Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, “Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 23.03.2022թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/562-22 գրության հիման վրա, 30.03.2022թ.-ին «Արմավ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 30.03.2022թ.-ին:

30.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/141 համարի ծածկագիրը:

06.04.2022թ.-ին, 15.04.2022թ.-ին և 29.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.04.2022թ.-ին:

2. <u>«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը 23.03.2022թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/562-22 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ.-ի հուլիսի 9-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 09:00-ին տեղի է ունեցել ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը, որի արդյունքում ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է հայտարարվել «ԱՐՄԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 08624127, հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Սևան Նալբանդյան փող. շ.44, բն.34, հեռ.՝ +374 94 912812, էլ. փոստի հասցե՝ avarmgroup@mail.ru):

«ԱՐՄԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ 2021 թվականի հուլիսի 27-ին կնքվել է թիվ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի ընկերությունը պարտավոր է եղել Պայմանագրի 1.1. կետով և Պայմանագրի թիվ 1 Հավելված Ծավալաթերթ-Նախահաշվով սահմանված աշխատանքները կատարել Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 45 (քառասունհինգ) օրացույցային օրվա ընթացքում:

Պայմանագրի 8.1. կետի համաձայն Պայմանագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից և պետք է գործեր մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունը ողջ ծավալով կատարումը:

«ԱՐՄԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Պայմանագրի 1.1. կետով սահմանված աշխատանքները պարտավոր է եղել սկսել 27.07.2021 թվականից ոչ ուշ և ավարտել 10.09.2021 թվականից ոչ ուշ, սակայն 27.07.2021 թվականի թիվ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 պայմանագրի 1.1. կետով սահմանված աշխատանքները Կապալառու «ԱՐՄԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն մինչև այժմ չի սկսել:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում ենք, որ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի և «ԱՐՄԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության միջև թիվ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 պայմանագիրը «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը 23.03.2022 թվականից միակողմանի լուծել է՝ ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «ԱՐՄԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արմավ Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արմավ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 30.03.2022թ.-ին գրությամբ դիմել է «Արմավ Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2022թ.-ի թիվ 26/26-1/5416-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

«Արմավ Գրուպ» ՍՊԸ-ն նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Արմավ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և Հայաստանի ագրարային համալսարան հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) միջև կնքվել է ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ընդհանուր շինարարական աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

26.08.2021թ.-ի թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրությամբ Ընկերությունը հանձնել, իսկ Պատվիրատուն ընդունել է թիվ 01 ակտում նշված աշխատանքները, որոնց ընդհանուր գինը կազմել է 1848550 (մեկ միփոն ութ հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Այնուհետև Ընկերությունը շարունակել է շինարարական աշխատանքները, որպես ապացույց ներկայացնում ենք շինարարական օբյեկտի լուսանկարը, որտեղ երևում է, որ Ընկերությունը առնվազն կառուցել է առաստաղը, տեղադրել է լուսատուները, վերջնահարդարել է հատակը՝ տեղադրել է լինոլեումը, ներկել է պատերը, եթե ներկել է պատերը, ապա կատարել է նաև պատերի հարդարումը ծեփամածիկով, էլեկտրամոնտաժման աշխատանքները լարերի միջոցով .... : Այսինքն, լուսանկարում երևում է, որ բացի թիվ 01 ակտում նշված Աշխատանքներից Ընկերությունը կատարել է պայմանագրով նախատեսված աշխատանքներից առնվազն 1575700 (մեկ մխիոն հինգ հար/ուր յոթանասունհինգ հւսցար յոթ հար/ուր) ՀՀ դրամի աշխատանքներ:

Պատվիրատուն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և հայտնել է, որ «ԱՐՄԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Պայմանագրի 1.1. կետով սահմանված աշխատանքները պարտավոր է եղել սկսել 27.07.2021 թվականից ոչ ուշ և ավարտել 10.09.2021 թվականից ոչ ուշ, սակայն 27.07.2021 թվականի թիվ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1. կետով սահմանված աշխատանքները Կապալառու «ԱՐՄԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն մինչև այժմ չի սկսել: Եվ հաշվի առնելով նշվածը «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի և «ԱՐՄԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության միջև թիվ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 պայմանագիրը «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը 23.03.2022 թվականից միակողմանի լուծել է՝ ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է «Ցուցակում», եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Պատվիրատուն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և խնդրել է Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում այն պատճառաբանությամբ, որ վերջինս մինչև այժմ չի սկսել Պայմանագրով սահմանված աշխատանքները: Մինչդեռ ինչպես նշված է փաստական հանգամանքներում, 26.08.2021թ.-ի թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրությամբ, Ընկերությունը հանձնել, իսկ Պատվիրատուն ընդունել է թիվ 01 ակտում նշված աշխատանքները, որոնց ընդհանուր

գինը կազմել է 1848550 (մեկ միլիոն ութ հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Բացի այդ, սույն դիրքորոշմանը կից ներկայացված լուսանկարից երևում է, որ Ընկերությունը առնվազն կառուցել է շինարարական օբյեկտի առաստաղը, տեղադրել է լուսատուները, վերջնահարդարել է հատակը, տեղադրել է լինոլեումը, ներկել է պատերը, եթե ներկել է պատերը, ապա կատարել է նաև պատերի հարդարումը ծեփամածիկով, էլեկտրամոնտաժման աշխատանքները լարերի միջոցով ....: Այսինքն, լուսանկարում երևում է, որ բացի թիվ 01 ակտում նշված աշխատանքներից Ընկերությունը կատարել է պայմանագրով նախատեսված աշխատանքներից առնվազն 1575700 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունհինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամի աշխատանքներ: Ուստի, նշյալից կարող ենք փաստել, որ հիմնազուրկ է Պատվիրատուի պնդումը առ այն, որ Ընկերությունը մինչև այժմ չի սկսել Պայմանագրով սահմանված աշխատանքները: Ելնելով նշյալից մենք նաև համաձայն չենք պայմանագիրը միակողմանի լուծելու հետ, քանի որ մինչև Պայմանագիրը լուծելը մենք կատարել ենք և կատարում էինք Պայմանագրով ստանձնած մեր պարտավորությունները: Ինչ վերաբերվում է Պայմանագրի ժամկետը երկարացնելուն, ապա հայտնում ենք, որ դա տեղի է ունեցել նաև Պատվիրատուի կողմից առաջադրված պահանջների պատճառով, որոնք առաջացրել են աշխատանքների լրացուցիչ ծավալներ, որոնք մենք կատարել ենք:

Ուստի վերոգրյալից հետևում է, որ Պատվիրատուի պնդումը, որի հիմքով նախաձեռնվել է սույն ընթացակարգը, հիմնազուրկ է: Հետևաբար գտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:»:

4. <u>ՍՑ-LO-2022/141 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Արմավ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 27.07.2022թ.-ին կնքվել է թիվ «ՀԱԱՀ-

ԳՀԱՇՁԲ-21/92» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ընդհանուր շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

iii. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

iv. Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 45 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

v. Պայմանագրի հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 23.03.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման կարգով 27.07.2021 թվականին «Արմավ Գրուպ» ՍՊ ընկերության հետ կնքված թիվ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 պայմանագրի 1.3. կետի համաձայն՝ Կապալառու «Արմավ Գրուպ» ՍՊ ընկերությունը պարտավոր է եղել Պայմանագրի 1.1. կետով և Պայմանագրի թիվ 1 (մեկ) Հավելված Ծավալաթերթ-Նախահաշվով սահմանված աշխատանքները կատարելու Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 45 (քառասունհինգ) օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրի 8.1. կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից և պետք է գործեր մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունը ողջ ծավալով կատարումը: Պայմանագիրը ստորագրվել է և ուժի մեջ է մտել 27.07.2021 թվականին: «Արմավ Գրուպ» ՍՊ ընկերությունը Պայմանագրի 1.1. կետով սահմանված աշխատանքները պարտավոր է եղել սկսել 27.07.2021 թվականից ոչ ուշ և ավարտել 10.09.2021 թվականից ոչ ուշ: Սակայն 27.07.2021 թվականի թիվ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69 պայմանագրի 1.1. կետով սահմանված աշխատանքները Կապալառուն մինչև այժմ չի ավարտել: Ընկերության կողմից կատարվել են միայն քանդման՝ 931550 ՀՀ դրամ գումարի աշխատանքներ և մասնակի նորոգման՝ 917000 ՀՀ դրամ գումարի աշխատանքներ, ընդամենը 1848550 ՀՀ դրամ գումարի աշխատանք, որոնց համար 26.08.2021 թվականին կազմված ակտի համաձայն 26.08.2021 թվականի Ա սերիայի թիվ 0401779084 հարկային հաշվով վճարվել է 1848550 դրամ: Մինչդեռ Պայմանագրի 5.1. կետի համաձայն՝ պայմանագրի գումարը կազմում է 4208850 (չորս միլիոն երկու հարյուր ութ հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որից չեն կատարվել 2360300 (երկու միլիոն երեք հարյուր վաթսուն հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումարի աշխատանքներ: Դրանից հետո աշխատանքներ այլևս չեն կատարվել, կամ կատարվել են անորակ՝ օգտագործման համար ոչ պիտանի և ընդունման ոչ ենթակա աշխատանքներ: Գրություններով Պայմանագրի կատարման ժամկետը բազմաթիվ անգամ երկարացրվել է՝ 20.12.2021 թվականին և 18.02.2022 թվականին, սակայն աշխատանքները դարձյալ չեն կատարվել: Ավելին, Ընկերության կողմից քանդվել և շարքից հանվել են ՀԱԱՀ գիտական կենտրոնի թանգարանի եզակի և դրամական գնահատման ոչ ենթակա ցուցանմուշներ: Նշված փաստն արձանագրել է այդ նպատակով կազմված հանձնաժողովը և քննարկվել ու հաստատվել է Գիտական խորհրդի կողմից: Տեղադրելու համար լինոլիումն ուղղելու նպատակով ընկերության կողմից օգտագործվել է 70000 դրամ գումարի էլեկտրականություն: Նույն ժամանակահատվածում Պատվիրատուն չի աշխատել՝ գտնվել է արձակուրդում և էլեկտրականություն չի ծախսել: «Արմավ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից Պատվիրատուին պատճառվել են նաև բազմաթիվ այլ վնասներ, որոնք պետք է բռնագանձվել ընկերությունից:

Վերոգրյալով պայմանավորված՝ Պայմանագրի 3.1.4 կետով սահմանված հիմքով 27.07.2021 թվականին կնքված թիվ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 պայմանագիրը Պատվիրատուն միակողմանի լուծել է 21.03.2022 թվականից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2022թ.-ի թիվ 26/26-1/5416-2022 գրությամբ «Արմավ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 3-րդ բաժնի համաձայն՝

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի և «Արմավ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 27.07.2022թ.-ին կնքված թիվ «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում: www.gnumner.am համացանցային 23.03.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետը, 21.03.2022թ.-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն

ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արմավ Գրուպ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2022թ.-ի թիվ 26/26-1/5416-2022 գրությամբ «Արմավ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/141 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արմավ Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**